

ՀԱՅԿՈՒՅՆ ՈՍԳ

ԼՈՒՍԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ

## ՌՈՒՍ

ՆՇԱՆԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐԶՈՐԴՆԵՐԻ  
ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

1949

91(47)04 15263

CP-30 փարսեանցի  
Սոս Կալանձար Ըս  
այսինքն չէրի...

62

490



91(47)(077)

Ս. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՍՅՈՒԳՎԱԾ Է 1961 թ. 7

ՌՈՒՍ ՆՇԱՆԱՎՈՐ ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ  
ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԳՊՐՈՑՈՒՄ

15263 A II 35053

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՌՈՒՍ ՄԱՐԿԿԱՆՑ ԱՆՈՒՆԵՐԻՆ ԱՇԽԱՐՀԻ  
ՔՍՐՏԵԶԻ ՎՐԱ



С. ПАРСАДАНЯН  
**Изучение жизни и деятельности  
знаменитых русских  
путешественников в школе**

(На армянском языке)  
Ереван, 1949 г.



## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Մեր աշակերտները համար վերին աստիճանի հետաքրքիր է ե անհրաժեշտ ուսու ժողովրդի և Սովետական Միության այլ ժողովուրդների նշանավոր մարդկանց կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը:


Այդ նպատակով Հայկական ՍՍՌ Կուսակցության մինիստրություն Ռուսաստանի գիտա-հետազոտական ինստիտուտը տպագրություն համար պատրաստել է առանձին գրքույկներ, որոնք նվիրված են ուսու նշանավոր գիտնականների կյանքին ու գործունեությանը:

Այդ գրքույկները, որոնք հրատարակվելու են համապատասխան առարկաների դասատուներին օգնություն պույլ տալու նպատակով, կարող են օգտագործվել ինչպես ուսուցման պրոցեսում, այնպես էլ արտագաստարանական պարապմունքների ժամանակ:

Սույն աշխատությունը հանդիսանում է վերոհիշյալ սերիայով հրատարակվող գրքույկներից մեկը, որը մեջ համառոտակի շարադրված է մի շարք ուսու նշանավոր ճանապարհորդների կյանքն ու գործունեությունը:

Դրքույկի առաջին բաժնում խոսվում է թե ինչպես պես է ուսու նշանավոր ճանապարհորդների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը կապել աշխարհագրության ճրագրային Նյութերի ուսուցման հետ:

Վերջում հավելվածի ձևով արված է Ն. Ա. Բենդերի «Ռուս մարդկանց անուններն աշխարհի քարտեզի վրա» գրքույկի աղյուսակի թարգմանությունը, որը կատարել է ընկ. Ա. Լազարյանը:



Սովետական ժողովուրդը ներկայումս իրականացնում է սոցիալիզմից ատիճանարար կոմունիզմին անցնելու հոյակապ խնդիրը:

Սովետական հասարակակարգի շարժումը՝ ղեկի կոմունիզմ կատարվում է աշխարհի պայմաններում, երբ սոցիալիզմին թըշնամի գոտակարգերը և նրանց պետութչունները ծրագրում են ամեն տեսակի ազրեօլ պլաններ՝ խանգարելու կոմունիզմի հաղթանակը:

Իմպերիալիստական գաղազած թշնամուն արժանի հակահարվածը տալու համար սովետական մարզկանցից պահանջվում է առաջիկ լարվածութչամբ աշխատել, է՛լ ավելի մեծ թափող գարգացնել սովետական գիտութչունը, կտարելզողործել ակննիկան: Մեր սիրելի Հայրենիքի հեռազա գարգացումն ու սամանների պաշտպանութչունը պահանջում են ավելի ուժեղացնել սովետական հայրենասիրութչան գաստիարակութչունը աշխատախորական լայն մատանների, երիտատարգութչան և պտտանեկութչան մեջ:

Չափազանց մեծ է գպրոցի դերը նոր սերնդի կոմունիստական շատախորակութչան գործում: Բողչեկչան պարտիան, մեր սիրելի առաջնորդ և ուսուցիչ մեծ Ստալինը պահանջում են գպրոցից՝ գաստիարակել մարգիկ, որոնք խորապես սիրեն սովետական հայրենիքը, նրա հասարակական և պետական կարգը, նրա կուլտուրան, գաստիարակել մարգիկ, որոնք հպարտանան իրենց հայրենակիցների պատմական խոշորագույն սանգձողործութչուններով, ապրեն ու դործեն սովետական ազգային հպարտութչամբ:

Սովետական գպրոցը պետք է ակախիօրեն մանակցի բողչեկչան պարտիայի գլխատարութչամբ տարվող այն պայքարին,



որ մղվում է բուրժուական ռեակցիոն կուլտուրայի նկատմամբ ցուցաբերվող ամեն մի ստորաքարշուլթյան դեմ, անհայրենիք կոտորածալիտիզմի՝ անդր-ամերիկյան իմպերիալիզմի ռեակցիոն փոփոխության դեմ:

Սովետական դպրոցի խնդիրը պետք է հանդիսանա սովորողներին առաջ վեր հանել ռուս առաջավոր խոշորագույն գիտնականների, գործիչների, ճանապարհորդների գերն ու նշանակութունը ռուսական և համաշխարհային առաջավոր գիտության, կուլտուրայի ու ակննիկայի զարգացման բնագավառում:

Ռուս աշխարհագրագետ-ճանապարհորդներն ամենամեծ պաշտոն են մատնել երկրագնդի մակերևույթի ճանաչողության մեջ:

Նրանք ուսումնասիրել են ոչ միայն մեր Հայրենիքի տերիտորիան, այլև դուրս են եկել նրա սահմաններից շատ հեռու: Նրանք հայտնաբերել են և ուսումնասիրել Կենտրոնական Ասիային հարող տերիտորիաները (Մոնղոլիա, Տիբեթ, Արևմտյան Չինաստան), Նոր Գվինեայի անհայտ մասերը, Հյուսիսային Ամերիկայի արևմտյան խաղաղօվկիանոսյան ափը, ներքին Աֆրիկայի և ներքին Հարավային Ամերիկայի զգալի մասը, բազմաթիվ կղզիներ Սաղավ օվկիանոսում, Հյուսիսային Սառույցյալ օվկիանոսում և, վերջապես, ուսաններն առաջինն են ոտք դրել Անտարկտիդայի ափերը:

Աշխարհագրության դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է կոնկրետ փաստերով և օրինակներով ցույց տա, որ ռուս աշխարհագրագետները և ճանապարհորդներն իրենց ուսումնասիրությունների և ճանապարհորդությունների ընթացքում չեն սահմանափակվել միայն հայրենի երկրի ուսումնասիրությամբ: Ռուս աշխարհագրագետների ճանապարհորդությունները կատարվել են աշխարհի յոսոր մայր ցամաքների և օվկիանոսների վրա:

Երկար ժամանակ գոյություն է ունեցել այն տեսակետը, թե իբր Հյուսիսային Սառույցյալ օվկիանոսի՝ Հյուսիս-արևելյան միջանցքի հայտնադործումը կատարել է շվեդացի Նորվենշիլդը 1878-1879 թ. թ., մինչդեռ սովետական գիտնականների հետազոտություններն ու ուսումնասիրությունները ապացուցել են, որ Հյուսիսային ծովային միջանցքը ռուս ծովագնացներին հայտնի է եղել մեզանից զեռու երկու դար առաջ:

Ասիա աշխարհամասի հետազոտութեան պատմութիւնից մեզ հայանի է, որ եվրոպացիները համառորեն ձգտում էին Ասիայի հյուսիսային և արևելյան ամերթի կարճ ճանապարհ գտնել Արևելքի հարուստ նրկիւնները գնալու համար: Մակայն եվրոպացիների այդ ուղղութեամբ կատարած փորձերը ենթարկվում են անհաջողութեան, և հետագա տարիների բնիկացքում Հյուսիսային ծովերով դեպի Հնդկաստան և Չինաստան տանող կարճ ճանապարհի սրտնման հարցը մնում է անհետևանք:

17-րդ դարում ուսու ճանապարհորդներն անցել են Ուրալը և Սիբիրի հյուսիսով հասել Մեծ օվկիանոսի ամերթին:

Կաղակ ճանապարհորդները 15—17-րդ դարերում թափանցել են Սիբիրի խորքը:

Ռուս կաղակները 1618 թվին Սիբիրի դաժան և վայրի բնութեան միջով հասել են Ենիսեյ գետին և այնտեղ հիմնադրել մի բնակավայր, որն այժմ կոչվում է Ենիսեյսկ: Կաղակ ճանապարհորդները բնիկներից տեղեկութիւններ են հավաքել այն մասին, որ դեպի արևելք գտնվում է Լենա խոշոր գետը: Մի խումբ կաղակներ, կաղակ Վասիլի Բուզորի գլխավորութեամբ, ցամաքով ճանապարհորդում են դեպի արևելք՝ Լենա գետը գտնելու նպատակով: Կաղակները Սիբիրի հյուսիսային մասով հասել են Յակուտիա և 1632 թ. հիմնել Յակուտսկ քաղաքը: Ամբաստանով Լենա գետի ամերթին ուսուները տեղեկութիւններ են հավաքել Սիբիրի գետերի, բնութեան և բնակչութեան մասին:

Սեմյոն Դեմներ 1648 թ. մի խումբ կաղակների հետ Կոլիմա գետով ճանապարհորդել է դեպի Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, նպատակ ունենալով գտնել Կոլիմա գետի գետաբերանը: Ծարուհնակելով իր ճանապարհը դեպի արևելք, նա շրջանցել է Չուկոտյան թերակղզին և հայտնաբերել Հին աշխարհը Ամերիկայից բաժանող նեղուցը: Սեմյոն Դեմներ Բերինգից մոտ 100 տարի առաջ հայտնաբերել է Ասիան Ամերիկայից բաժանող նեղուցը: Մակայն Դեմնի ծառայութիւնը աշխարհապարտական դիտութեան մեջ ճանաչվել է միայն 19-րդ դարում, երբ Իրկուտսկի արխիմով հայտնաբերվել են տեղեկութիւններ՝ կաղակ ճանապարհորդների մասին:

Ասիայի հյուսիսային և արևելյան ամերթի ուսումնասիրման



գործում իրենց պատվաւոր տեղն ունին Ատլաոտվը, Կրաշենիննիկովը և Չիրիկովը: Նրանք ուսումնասիրել են Կամչատկայի ամերբեկապացուցել, որ այն ընկած է 51<sup>0</sup>—62<sup>0</sup> հյուսիսային լայնության և 156<sup>0</sup>—170<sup>0</sup> արևելյան երկայնության միջև: Այս ուսումնասիրությունների մասին 1733 թ. տեղեկություններ է հաղորդվել ուսական կառավարությանը և կառավարության սրտումամբ նույն թվականին կազմակերպվել է Հյուսիսային խոշոր էքսպեդիցիան, որի գլուխն էին կանոնաձևակազմիկոսներ Գմելինը և Միլլերը: Գմելինը և Միլլերը իրենց օգնական էին վերցրել ուսանող Ստեպան Պետրովիչ Կրաշենիննիկովին: Հասնելով Սիրիբ՝ ակադեմիկոսները դժվարանում են զնալ Կամչատկա և այդ գործը հանձնարարում են իրենց օգնականին: 21 տարեկան Ստեպան Պետրովիչը կանգ չի առնում ոչ մի դժվարության առաջ: Նա Կամչատկայում ապրում է երկար ժամանակ և ուսումնասիրում այդ երկիրը: Կրաշենիննիկովը ստքով անցնում է թերակղզու մի ծայրից մյուսը, ուսումնասիրում նրա բնությունը, կամչատկեցիների կյանքը և կենցաղը, հավաքում մեծ քանակությամբ բույսերի արժեքավոր տեսակներ: 12 տարվա համառ աշխատանքի ու գիտա-հետազոտական ուսումնասիրությունների նյութերը վերադարձից հետո նա հանձնում է Պետերբուրգի Ակադեմիային: Այդ նյութերի հիման վրա հետազոտում հրատարակվում է «Описание земли Камчатки» գիրքը: Կրաշենիննիկովի աշխարհագրական այդ կլաստիկ աշխատությունը զբաղել է ոչ միայն ուսու, այլև ամբողջ աշխարհի գիտնականների ուշադրությունը: Իր ուսումնասիրությունների ընթացքում Կրաշենիննիկովը որոշել է թերակղզու սահմանները, ուսումնասիրել է գետերը, լճերը, լեռները, նկարագրել կենդանական և բուսական աշխարհը:

1819 թվին ուսու նշանավոր ծովագնաց Բելլինսոգուտզենի գեկավարությամբ Կրոնշտադտից «Վաստոկ» և «Միրնի» նավերով զեպի Անտարկտիդա է ուղևորվում մի էքսպեդիցիա: Բելլինսոգուտզենը նախառակ ունեւ ուսումնասիրություններ կատարել այն ջրերում, սրտեղ զեու 1772—1775 թվականներին եղել էր անգլիացի կապիտան Կուկը: Ռուսական նավերը շարժվում են զեպի հարավ, մինչև համատարած սառույցների սահմանը, լինում են այնտեղ, սրտեղ չի եղել Կուկը և հերքում նրա կար-



ծիքը՝ հարավային բևեռային ավազանում ցամաքի բացակա-  
յության մասին: Անդլիացի Կուկը հայտնել էր այն միաքը, որ  
ավելի հեռու, քան ինքը եղել է, ոչ ոք զննալ չի կարող, քանի  
որ ճանապարհին կան համատարած սառույցներ: Ռուս նավաու-  
տիներ Բելլինսոպուզները և Լազարևը կատարում են այն, ինչ  
անդլիացի Կուկը համարել էր անհնարին: Ռուսները ապացու-  
ցեցին, որ կա «անհայտ» հարավային ցամաք: Անտարկտիդա  
մայր ցամաքի հայտնագործման պատիվը պատկանում է ռուս-  
ներին:

Աֆրիկայի հեռադոտության պատմության մեջ իրենց բա-  
ժինն ունեն սուս ճանապարհորդներ Յուսկերը և Կոլալեսկին:  
Հնդկաստանի հեռադոտության պատմության մեջ հիշատակվում  
է Աֆանասի Նիկիտինի անունը: Աֆանասի Նիկիտինը Վասիլ-  
դե-Դամայից քառսրդ զար առաջ ելել է Հնդկաստանում և չա-  
փազանց արժեքավոր տեղեկություններ է հավաքել Հնդկաստա-  
նի մասին:

Աշխարհագրության զարգացման պատմության մեջ մեզ  
հայտնի են այնպիսի դեմքեր, որոնք համաշխարհային հուշակ  
են վայելում: Այստեղ մենք նկատի ունենք Լոմոնոսովին և  
Կրաշենինսկիովին:

Լոմոնոսովը համաշխարհային աշխարհագրական դիտու-  
թյան մեջ առաջ է քաշել և զարգացրել համեմատական աշ-  
խարհագրության իզեան և ստեղծել է անասական աշխարհա-  
գրության գաղափարը. անասական աշխարհագրություն տե-  
րմինը առաջին անգամ համաշխարհային դիտության մեջ գործ է  
ածել Լոմոնոսովը:

Կրաշենինսկիովը 1755 թ. ավել է առաջին խոշոր երկրա-  
դիտական աշխատությունը, որում ցույց է արված բնության և  
մարդու անբաժանելի կապը, նրա բնորոշ գծերը մարդու կյան-  
քի կազմակերպման գործում: Այդ առաջին կամպլեքտային աշ-  
խատությունն է, որի մեջ պարզարանվում է, թե ինչպես ու-  
սումնասիրել աշխարհագրական լանդշաֆտները և շրջանները:

19-րդ դարի խոշոր աշխարհագրագետ-ճանապարհորդ Սեմ-  
յոնով-Տյան-Շանսկին ստեղծել է դաշտային ուսումնասիրու-  
թյունների կամպլեքտային մեթոդը: Այդ մեթոդը ռուսական աշ-  
խարհագրական մաքի ամենափայլուն նվաճումներից մեկն է:  
Լոմոնոսովի, Սեմյոնով-Տյան-Շանսկու, Պրժեկլալսու, Վոյեյկովի

Անուշինի և շատ ուրիշ ուսու աշխարհապրապետների ու ճանապարհորդների հետազոտութիւնները, հայտնադործումները, ճամփորդական նկարագրութիւնները և գիտական աշխատութիւններն իրենց ճշմարտացիութեամբ և տեսական մարի խորութեամբ աշխարհապրական գիտութիւնը հարստացրել են ամենախոշոր գանձերով:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սեփուցիան լայն ճանապարհ բացեց գիտութեան բոլոր բնագավառների բուսն զարգացման համար: Մեր երկրում սովետական կարգերի հաստատումը լիակատար հնարավորութիւններ սակզծեց աշխարհապրական գիտութեան աննախընթաց զարգացման համար:

Սովետական գիտնականներ Կոմարովը, Շուկալովին, Կոզլովը, Օրբուշեք, Արսենովը, Բերգը և ուրիշներ, հետևելով ուսուական առաջավոր աշխարհապրապետների լավագույն արագիցիաներին, առաջ տարան աշխարհում ամենատաղավոր աշխարհապրութիւնը՝ սովետական աշխարհապրութիւնը, որն իր մեթոդով և լիակատար միանգամայն հակառակ է բուրժուական հակագիտական, վուլգար-մատերիալիստական և սեպիցիսն աշխարհապրութեանը:

Սովետական կառավարութիւնը, սոյլեկիկներ զարտիան և անձամբ բնկեր Ստալինը սչինչ չեն խնայում սովետական աշխարհապրական գիտութեան զարգացման համար: Սովետական գիտնականների կողմից կազմակերպուող էքսպեդիցիաների նախապատրաստումն ու աշխատանքի ընթացքը մեզ մոտ համարվում է համաժողովրդական մեծ գործ և արժանանում է մեծ Ստալինի հայրական ուշադրութեանը և ժողովրդի հոգատարութեանը:

Սովետական աշխարհապրութիւնն իր առաջ նպատակ է դրել կոմպլեքսային մեթոդով ուսումնասիրել բնութիւնը և նրա մեջ տեղի ունեցող երևույթների փոխազդեցութիւնը և փոխազարմ կապվածութիւնը՝ նպատակ սնեհնալով այն ի սոյաս դնե մեր սոցիալիստական Հայրենիքի ժողովրդական անտեսութեան զարգացմանը: Մեզ անհրաժեշտ չեն արտաքին նկարագրութիւններ, այլ խոր անալիզ, որը հնարավորութիւն աա տիրապետել բնութեանը և վերափոխել այն: Սովետական աշխարհապրութիւնը ամուր կապված է ժողովրդական անտեսութեան հետ:



և իր հետազոտությունները կապում է ստալինյան հնդամյակի խնդիրներին հետ:

Արևիկալի հետազոտման և յուրացման սովետական շրջանը իրականացրեց մարդկության 400 տարվա ջանքերը: Արևիկալի սովետական շրջանի հետազոտության պատմության մեջ ամենագլխավորն այն է, որ Սովետական իշխանության, բոլշևիկների պարտիայի և անձամբ բնիկը Ստալինի ղեկավարությամբ մեր գիտնականները և բեռախուշները 1932 թվականին «Միրբրյակով» ռուսացանառով Եվրոպայի և Ասիայի հյուսիսային ծովերով՝ Արևմտահարավային մինչև Խաղաղ օվկիանոսն անցան մեկ նավիկացիան շրջանում: «Միրբրյակով» նավի արշավախմբի հաղթանակը բեռախուշ ծովերի բնության աարերքի ղեմ, համաշխարհային նշանակություն ունեցող հաղթանակ էր, որ ձեռք բերին սովետական մարդիկ:

1933 թ. օգոստոսին «Չելյուսկին» նավով Մուրմանսկից դուրս եկավ նոր էքսպեդիցիա, հայտնի բեռախուշ Օ. Յու. Եմիլովի ղեկավարությամբ՝ Հյուսիսային ծովային ճանապարհն ուսումնասիրելու նպատակով:

Չելյուսկինի արշավախումբը հերոսաբար հաղթանակելով արևիկական դժման բնության արհավիրքները՝ անդամատելի ավանդ մուծեց Արևիկալի ուսումնասիրության պատմության մեջ և խոշորագույն ծառայություն մատուցեց Հյուսիսային ծովային ճանապարհի յուրացման գործում:

Սառցահատ «Լիակին» 1934 թ. ամռանը Խաղաղ օվկիանոսի և Հյուսիսային Սառույցալ օվկիանոսի ծովերով արևելքից-արևմուտք անցավ դարձյալ առանց ձմեռելու մեկ նավիկացիան շրջանում: Արևիկալի յուրացման գործում սովետական գիտնականները կողմից նվաճված մյուս փայլուն հաղթանակը գրեթե կայանի անձնակազմի՝ Պապանինի, Ֆեոդորովի, Շիրշովի, Կրենկելի կողմից Հյուսիսային բեռի նվաճումն է:

ՍՍԽՄ Հյուսիսային ծովային ուղու ըացումը մեր երկրի ժողովրդական անասության զարգացման և երկրի պաշտպանության համար սակեղծում է լայն հնարավորություններ: Բեռում և Արևիկալի ծովերում սովետական գիտնականները պատմության մեջ առաջին անգամ կատարեցին օդերևութարանական հիդրոգրաֆիկ, հիդրոստանիկական, մագնիսային գիտումներ և



ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունները պարզեցին, որ Առլանտայան օվկիանոսի ջրի համեմատաբար ավելի տաք լինելը նկատվում է նաև բևեռում՝ 200—600 մետր խորության մեջ: Բևեռային շրջանում է առաջանում ցիկլոնը և ստեղծում արկտիկական ֆրոնտ, որով սլայմանավորված է ՍՍՌՄ ընդարձակ տերիտորիայի կլիման:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սևուցեյիայից հետո սովետական աշխարհագրագետները ղինված կենինի Ստալինի առաջավոր դիտությամբ, յուրացրին Արկտիկան, Սիրիբը, Ղաղախոտանի և Միջին Ասիայի չոր անապատները, նրանք համարձակորեն զարգացրին բնությունը մարդու կողմից վերախոխելու հարցը: Հենվելով կենինի—Ստալինի ուսմունքի վրա՝ սոցիալիզմի շինարարության մասին, սովետական աշխարհագրագետներն ստեղծել են անասական ապանաշման սովետական մեթոդը: Ֆիզիկո-աշխարհագրական միջավայրի կոմպլեքսային և գիտական ուսումնասիրությունների միջոցով մեր երկրի սոցիալիստական արդյունաբերության և դյուրատնտեսության զարգացման համար ստեղծվել են ամենայայն հեռանկարներ: Ռուսական աշխարհագրությունը ոչ մի շրջանում այնքան նվաճումներ չի ունեցել, որքան սովետական իշխանության տարիներին: Սովետական աշխարհագրությունը համաշխարհային հրուշակ է նվաճել:

Աշխարհագրության դասավանդումը մեր դպրոցում պետք է ընթանա աշխարհագրական առաջավոր գիտության ետևից՝ դպրոցականների առաջ բաց անելով գիտության կողմից ձևաքերված նորագույն նվաճումները: Դպրոցը պետք է մեր աշակերտներին ծանոթացնի ուսու աշխարհագրագետների և ճանապարհորդների կյանքի ու պայքարի հետ: Աշխարհագրության ուսուցումը դպրոցում պետք է աշակերտների մեջ դարպացնի հպարտության և սիրո զգացմունք գեպի իր Հայրենիքը, զեպի նրա ստեղծագործող մարդիկ:

Մ. Ի. Կալինինը հերոս պապանինականներին սլարդատորու առթիվ ասել է.

«Աշխարհի բոլոր գոտագրքերում կասվի, որ ուսու գիտնականները առաջինը Հյուսիսային բևեռ հասան և հսկայական հետազոտական աշխատանք կատարեցին՝ Հյուսիսային բևեռից»

մինչև Գրենլանդական ծովի հարավային մասը, որը մինչև այժմ բոս հարկի չէր ուսումնասիրվել:

Նշանակում է գուք նոր էջ եք բաց արել ուսն գիտնականների նվաճումների մեջ: Եվ ահա զրա համար, նրա համար, որ գուք գիտնականների նվաճումների մեջ նոր էջ եք բաց արել, ձեր հաջողությունների համար, որոնք անսպասման համաշխարհային նշանակութուն ունեն, ահա զրա համար ընկերները պարզեացրել են ամենաբարձր պարզեով, որին պարտիան և կոստայորությունը կարող են արժանի համարել իր երկրի զավակներին»<sup>1</sup>:

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԻՆՉՊԵՍ ՄԱՆՈԹԱՅՆԵԼ ՌՈՒՍ ՆՇԱՆԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ռուս խոշոր աշխարհագրագետ-ճանապարհորդների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը մեծ չափով է աւրնչվում միջնակարգ գաղտնի աշխարհագրության դասընթացի հետ:

Ճ-րդ գասարանում Նվրոսայի ընդհանուր տեսությունն անցնելիս ուսուցիչն աշակերտներին քարտեզի վրա ցույց է տալու աշխարհագրական բաղմամբով օրեկաներ, որոնց հայտնարերումը և ուսումնասիրությունը կապված են ուսն գիտնականների անվան հետ: Աշխարհագրության գասատուն պետք է այս հանգամանքը օգտագործի և ցույց տա, որ Նվրոսայ աշխարհամասի հետագոտության պատմության մեջ ուսն աշխարհագրագետներն ունեն իրենց արժանահիշատակ ծառայությունը: Այսպես, օրինակ՝ Նվրոսայի կղզիներն անցնելիս աշակերտներին պետք է ասել, որ Նոր Երկիրն ուսումնասիրել են ուսն գիտնականներ Ռոզմիստովը, Լիտկեն և ուրիշները:

Ռուս արդյունարերող Լոշինը 1770-ական թ. թ. առաջինը շրջնց Նոր Երկրի շուրջը և ապացուցեց, որ այն կղզի է:

Ռուս ականավոր գիտնական Կրասոտսկինը 1871 թվին կազմում է ուսնական ընկռային էքոպեդեցիայի պլանը, որն իր առաջ նպատակ էր զրել գտնել այն «խոշոր անհայտ երկիրը», որ ընկած է Նոր Երկիր կղզիներինց դեպի հյուսիս Կրասոտսկինը ենթադրում էր, որ Նոր Երկրից հյուսիս, այնլի բարձր աշխարհագրական լայնության տակ, քան Շպիցբերգենն է, պետք է

<sup>1</sup> «Երգվեստի», 28 մարտի, 1938 թ.:



լինի ցամաքի մաս: Այդ մասին էին վկայում Նոր Երկրից դեպի հյուսիս-արևմուտք սառույցների անշարժ դրությունը, քարերի և ցեխի գոյությունը՝ լողացող սառույցների վրա: Կրասպտիկինի կազմած բևեռային էքսպեդիցիայի պլանն իրականացնելու համար պարական կառավարությունը միջոցներ չի տրամադրում:

Ռուս խոշոր հետազոտող Գեորգի Սեդովը 1912 թվին կազմակերպում է էքսպեդիցիա դեպի Հյուսիսային բևեռ: Գեորգի բևեռ ճանապարհորդելուց առաջ Գեորգի Սեդովը դրել է. «Ռուս մարդկանց մոտ Հյուսիսային բևեռը հայտնաբերելու ջերմ ցանկություն է հանդես եկել դեռ Լոմոնոսովի ժամանակից: Ամուսնացածները ցանկանում էր, ինչպես էլ որ լինի, պահպանել Հյուսիսային բևեռը գտնելու նորվեգական պատիվը: Իսկ մենք այս տարի կդնանք և ամբողջ աշխարհին ցույց կտանք, որ ուսաներն ընդունակ են այդպիսի սխրագործության»:

Շպիցբերգեն կղզիների մասին խոսելուց հետո, պետք է համառոտակի տեղեկություններ հաղորդել, որ 1743 թվին Ալեքսեյ Նիմիկովը մի խումբ ընկերների ուղեկցութեամբ նավով հասել է Շպիցբերգեն կղզիների հարավ-արևելյան ափերին, նավը խարխիս է ձգել, իսկ արշավախումբը, փոխադրվելով կղզիներից մեկի վրա, անվանի գիտնականի ղեկավարութեամբ կատարել է ուսումնասիրություններ: Նիմիկովի էքսպեդիցիան Շպիցբերգենի վրա անց է կացրել 6 ձմեռ, որից հետո ուսական նավով վերադարձել է հայրենիք: Վլադիմիր Ալեքսանդրովիչ Ռուսսանովը 1910 թվին նույնպես ուսումնասիրություններ է կատարել Շպիցբերգեն կղզիներում: Ռուսանովը հայտնի է սրպիս բևեռախուշոյ, նա մահացել է այն ժամանակ, երբ փորձ էր անում անցնել Սառույցյալ օվկիանոսի հյուսիս-արևելյան ճանապարհով: Ռուսանովի հիշատակը հավիթժացնելու նպատակով Նոր Երկրում նրա անունով են կոչել ձյան ձոր, լեռ, թերակղզի, նեղուց և այլն:

Ասիա աշխարհամասն անցնելիս ուսուցիչը պետք է աշակերտներին ծանոթացնի այն ուսուցիչաբանագրագետ-ճանապարհորդների կյանքի ու զործունեության հետ, որոնց անունները կապված են այդ աշխարհամասի ուսումնասիրությունների հետ: Ասիայի սահմանները, նեղուցները, ինչպես նաև հետազոտու-



թյան պատմությունն անցնելիս, աշակերտները մեծ ուշադրութեամբ կլանն ուսուցչի պատմածը՝ ուսն խոշոր աշխարհագրադեա ծովագնաց Վիտուս Բերինգի մասին: Բերինգի կյանքի ու գործունեութեան մասին կարելի է կազմակերպել աշխարհագրական երեկո, սրտեղ զեկուցումով հանդես կգա ուսուցիչը, կամ աշակերտներից մեկը, բայց այն, ինչ անմիջապես կապված է օրվա գասի հետ, պետք է անցնել դասի պրոցեսում: Աշխարհագրութեան դասատուն, Ասիան Ամերիկայից բաժանող Բերինգի նեղուցի մասին խոսելիս, աշակերտներին համառոտ տեղեկություններ պետք է տա, թե երբ, ինչպիսի պայմաններում և ո՞վ է հայտնաբերել այդ նեղուցը, ի՞նչ նշանակութուն է ունեցել այն գիտութեան համար:

Ռուսական հյուսիսային խոշոր էքսպեդիցիայի ղեկավար Բերինգը 1725—1741 թ. թ. հետազոտել է կամչատկայի ավերը: Չուկոտայան թերակղզին, անցել է Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսով և սպացուցել, որ Ասիան Ամերիկայից բաժանվում է նեղուցով: Բերինգին է պատկանում կամչատկայի զեպի Ալյասկա ասնող ծովային ճանապարհի հայտնագործումը: Առաջին ռուսական ճանապարհորդութեանը, որի նպատակն էր պարզել, թե արդյո՞ք Ասիան միացած է Ամերիկային, կատարվել է 1727—1728 թվերին նախատորմի առաջին կարգի կապիտան Բերինգի ղեկավարութեամբ: Բերինգի անունը հավերժացնելու համար Ամերիկան Ասիայից բաժանող նեղուցը և ծովը կոչել են նրա անունով:

Անդրադառնալով Ասիա աշխարհամասի ավերը ոչ ոքող օվկիանոսների հետազոտման պատմութեան հարցերին, չի կարելի մոռացութեան տալ և աշակերտներին տեղյակ չպահել Բուրիս Անդրեևիչ Վիկիցիևու 1913—1915 թ. թ. «Թագմիր» և «Վալդաչ» սառցահատներով Սիբիրի հյուսիսային ավերով Վլադիվոստոկից մինչև Ա. խանգելսկ կատարած ճանապարհորդութեան մասին:

Աշխարհագրութեան ոչ բոլոր ուսուցիչներն են օգտագործում մի չափազանց լավ միջոց, որի կիրառմամբ նյութն ավելի հետաքրքիր է դառնում, իսկ աշակերտների զիտելիքներն ավելի հաստատուն: Գաստատուն տարվա ընթացքում բազմաթիվ անգամ աշակերտներին ցույց է տալիս Թագմիր թերակղզին, սպասումում կապանվների ծովի և այն հետազոտողների մասին, բայց

եղակի չեն այնպիսի աշակերտներ, որոնք քննության ժամանակ ոչ միայն չեն իմանում Լապտե եղբայրների անունը, նրանց մատուցած ծառայությունը, այլև զժվարանում են ցույց տալ նրանց անուններով կոչվող աշխարհագրական օբեկտները: Այս և նման շատ բացերի վերացման մեթոդները բազմազան են, բայց տարիների փորձը ցույց է տվել, որ եթե աշխարհագրական օբեկտի ուսուցումը կապակցվում է որևէ զործսուբյեկտի, պատմական իրադարձության, կամ խոշոր անվան հետ, ապա աշակերտների հիշողության միջից երբեք չի մոռացվում:

Եվ իրոք, Լապտեների ծովի, ինչպես նաև Քայմիր թերակղզու ուսումնասիրությունը, 1739—1743 թվականներին, ինչու չկապել Իմիտրի և Խարիտոն Լապտեների անվան և կատարած զործունեության հետ: Ինչու խոշոր աշխարհագրագետ Նոկարսիուս պահանջով Հյուսիսային Երկիր և Նորսիբիրական արշավախումբի միջև ընկած ծովը կոչվել է Լապտե եղբայրների անունով: Աշխարհագրության դասատուն պետք է օգտագործի բոլոր միջոցները աշակերտներին ցույց տալու ուսուցիչականների դերը աշխարհամասերի հետազոտման պատմության մեջ:

Բացառուց արիբուն Սերգեյ Միրոնովիչ Կիրովը 1932 թ. իր ելույթներից մեկում ասում է.

«Ինչու կոմսոսովը իր ժամանակին մարզկանց հրավիրում էր գնալ Հյուսիս տեսնելու, թե ի՞նչ է կատարվում աշխարհում: Այդ հեռատես մարդը, որն ապրում էր մեզանից 200 տարի առաջ, մտահոգ ասում էր. «Շատ սպառնալից են եղբակացուում եմ, որ հյուսիսի ընդերքում նույնպես լայնարձակ ու հարուստ թաղավորում է բնությունը և այդ հարստությունները որոնող չկա, իսկ մետաղներն ու հանքանյութերը իրենք իրենց ստքով մեր բակը չեն գա: Հարկավոր է աչքեր ու ձեռքեր նրանց որոնելու համար»: Ես կարծում եմ, մեր բոլոր լուսավորական կազմակերպությունները, Իստությունների ակադեմիայից սկսած, և բոլոր զործնական աշխատողները պետք է հետևեն կոմսոսովի օրինակին և իրենց ձեռքերով ու աչքերով շոշափեն այն ամենը, որ կա այդ հարուստ ու լայնարձակ երկրում<sup>1</sup>»:

<sup>1</sup> Համ Կ(բ) Պարտիայի Լենինգրադի քաղաքային և ժարգային միացյալ 4-րդ կոնֆերանսում արտասանած հառից:




15263  
A 35053  
II

Կենտրոնական Ասիայի, Տիբեթի բարձրադասնակի, Գուրի անապատի, Մանջուլիայի, Տյան-շանի լեռնաշխարհի, Սուանխե և Յանցզիցզյան գետերի ուսումնասիրութեանն են ու հետազոտութեանն կապված են ուսս խոշոր աշխարհագրագետ ճանապարհորդների կյանքի և գործունեութեան հետ: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը ոչ միայն քարտեզի վրա ցույց տա վերահիշյալ աշխարհագրական օբեկտները, այլև Պրժեմլալու, Միկլուխով-Մակլայի գետի Կենտրոնական Ասիա կատարած ճանապարհորդական և հետազոտական նյութերից ընարի համապատասխան հատվածներ և հարստացնի ու զբաղիչ զարձնի գտաի թեման: Ճամփորդական հիշողութեանն կապված աշխարհագրական հետազոտութեանն զեղարվեստական նկարագրութեանն կապված ընթերցումը՝ Կենտրոնական Ասիայի մակերևութը, կլիմայի, բուսական ու կենդանական աշխարհի և էանոգրաֆիայի մասին, աշակերտների հիշողութեան մեջ ամուր հեռք կթողնեն Պրժեմլալու, Միկլուխով-Մակլայի, Կոլլովի կատարած աշխարհագրական ուսումնասիրութեանն կապված ճանապարհորդութեանն կապված մասին:

Այդ նույն թեման մշակելու ընթացքում պետք է աշակերտներին հաղորդել, որ Սեմյոնով-Տյան-Շանսկին 1856—1858 թվականներին ուսումնասիրել է Կենտրոնական Ասիայի Իսիկ-Կուլ լճի ափերը, Տյան-շանի լեռները, հայտնաբերել է Սանթենյուրի գաղաթը: Իր կատարած ուսումնասիրութեանն կապված ճանապարհորդութեանն կապված մասին Սեմյոնով-Տյան-Շանսկին ունի բազմաթիվ աշխարհագրական զեղարվեստական նկարագրութեանն են, որոնց ուսուցչի հանձնարարութեամբ աշակերտները պետք է կարգան և հարստացնեն իրենց գիտելիքների պաշարը:

Ասիա աշխարհամասի ծայրագույն հրվանդանները ցույց տալուց հետո, անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե ինչու ենք անվանում Չեյլուսկինի հրվանդան, ո՞վ է Չեյլուսկինը և ի՞նչ ծառայութեան է մատուցել նա աշխարհագրական գիտութեանը:

Ուսս հայտնի բեռնախույզ Չեյլուսկինը 1741 թվին հասել է Ասիայի ամենահյուսիսային հրվանդանին և այն անցկացրել քարտեզի վրա: Այդ հրվանդանը Չեյլուսկինը անվանել է Հյուսիս-արևելյան և իր հետ առած փայտից պատրաստել է նշանաձող ու կանգնեցրել հրվանդանի վրա:



Ասիա աշխարհամասի հյուսիսային ծայրագույն հրվանդանը, որը դանվում է հյուսիսային լայնության  $76^{\circ}43'$  և արևելյան երկայնության  $104^{\circ}—107^{\circ}$  տակ, հետագայում կոչվել է Չելյուսկինի անունով:

Արևելյան Սիբիրի և Հեռավոր Արևելքի մակերևույթի, կլիմայի, բուսական և կենդանական աշխարհի մասին պատմելիս գամատուն պետք է հիշատակի Վլադիմիր Կլավդևիչ Արևնեկի՝ Ուսուբական երկրում և Հեռավոր Արևելքում կատարած ուսումնասիրությունների մասին: Չափազանց խրախուսելի կլինի, որ աշխարհագրության գասատուն աշակերտների առաջ կարգա Մ. Գորկու տոորե բերված նամակը Վ. Կ. Արևնեկի՝ «Իերսու Ուղալա» գրքի մասին:

«Հարգելի Վլադիմիր Կլավդևիչ! Ձեր գիրքը ես մեծ հաճությամբ կարդացի: Չխոսելով նրա արժեքի մասին, որ իհարկե, անկասկած է և խոշոր, ես հրապուրված և հափշտակված եմ նրա հնարամտության ուժով: ...Նրևակայեցեք, ինչ զեղեցիկ ընթերցանություն երիտասարդության համար, որը պետք է ճանաչի իր երկիրը»:

Արևնեկին իր ճանապարհորդությունների և ուսումնասիրությունների ընթացքում գրել է „По Уссурийскому краю“, „Дереву Уэйла“, „В дубрах Приморья“, „Сквозь тайгу“ և այլ շատ ճափագանց հետաքրքիր գրքեր:

Կամչատկա թերակղզու ուսումնասիրություն և նկարագրություն ամբողջ պատմությունը կապված է Ստեպան Պետրովիչ Կրաշենինիևիովի անվան հետ: Նա սուս առաջին հետազոտողն է, որ 1731—1764 թ. թ. ուսումնասիրել է Կամչատկան և կազմել „Описание земли Камчатки“ հիանալի գիրքը: Ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը կարդացել է այդ գիրքը և այնտեղից աշխարհագրական և պատմական բովանդակությունը մանրամասն քաղվածքներ է արել:

Աֆրիկա աշխարհամասի հետազոտություն պատմությունը սերտորեն կապված է ուսու աշխարհագրագետ-ճանապարհորդ Վասիլի Վասիլևիչ Յունկերի, Միկլուխտ-Մակլայի, Լիսյանսկու անունների հետ: Սակայն զործածություն մեջ եղած աշխարհագրություն գասագրքերում այդ մասին չի խոսվում: Այդ բացը



վերացնելու համար ուսուցիչը պետք է կողմնակի աղբյուրներ օգտագործի և Աֆրիկայի հետազոտութեան պատմութեան հարցերի մասին խոսելիս նշի վերհիշյալ գիտնականների Աֆրիկայում կատարած ուսումնասիրութեանները և հետազոտութեանների մասին: Այսպես, օրինակ՝ 1875 18՝6 թ. թ. Յունկերն ուսումնասիրել է Անզլո-նզիպտական Սուդանի անապատները, հասարակածային Աֆրիկան, ինչպես նաև Կոնգո գետի ավազանը: 1886—1888 թ. թ. Միլլուխտ-Մալլայը ճանապարհորդել է Աֆրիկայի արևելքով, եղել է Կանարյան կղզիներում, Մադեյրաս կղզու վրա, Մարոկկոյում և Կարմիր ծովի ափին:

Իվան Իվանովիչ Կրուզենշտերնը 1803—1806 թ. թ. կատարել է առաջին ռուսական շուրջերկրյա ճանապարհորդութեանը, որի վրա ինչիք էր գրված ռուսական դրոշակն առաջին անգամ պատել երկրի շուրջը: Կրուզենշտերնի անունով Խաղաղ օվկիանոսում կոչվել են մի շարք կղզիներ:

Յուրի Ֆեոդորովիչ Լիտյանսկին մասնակցել է Կրուզենշտերնի 1803—1806 թ. թ. շուրջերկրյա ճանապարհորդութեանը, որպես «նեվա» նավի կապիտան:

Վասիլի Միխայլովիչ Գոլովինը 1807—1814 թ. թ. շուրջերկրյա ճանապարհորդութեան գեկավարն է եղել. նա 1817 1819 թ. թ. «Կամչատկա» նավով կատարել է նոր ճանապարհորդութեան, եղել է Բրազիլիայում և Հյուսիսային Ամերիկայում:

Ամերիկայի հյուսիս-արևմտյան մասի հետազոտութեան և Ամերիկայի հայտնաբերման պատմութեան մեջ խոշոր դեր են խաղացել ուսաները: 6-րդ դասարանում Ամերիկայի ֆիզիկական աշխարհագրութեանն անցնելիս և առանձնապես Ամերիկայի հետազոտման պատմութեանն ուսումնասիրելիս պետք է քննարկել ուսուցիչի աշխարհագրագետների և ճանապարհորդների կատարած ուսումնասիրութեանները Ամերիկա մայր ցամաքում: Ռուսական աշխարհագրական հետազոտութեանների պատմութեան էջերում գրված է Սեմյոն Դեֆնեի անունը, որն առաջին անգամ անցել է Բերինգի նեղուցով:

Բերինգից հետո 1730 թ. շուրջման Ֆեոդորովը, տոպոգրաֆ Գլոգլեի հետ, նավարկել են Ամերիկայի ափերով՝ հասել են Ասիան Ամերիկայից բաժանող նեղուցին և այն զձաղրել քարտեզի վրա:

1741 թ. հուլիսին Բերինցի և Չիրիկովի հրամանատարությամբ Պետրոպոլիտովսկից արշավախումբ ճանապարհվեց ղևախ հյուսիս։ Վերադարձի ճանապարհին Բերինցը հայտնաբերում է մի շարք կղզիներ։ 1741 թ. գեկաներին Բերինցը հիվանդանում է ցինգայով և մահանում։ Արշավախմբի կենդանի մնացած անդամները հաջորդ տարվա օգոստոսին մի փոքր նավով վերադառնում են Պետրոպոլիտովսկ։ Արշավախումբը Չիրիկովի ղեկավարությամբ հասնում է Ալյասկայի ափերը և նավարկում ցամաքի հյուսիս-արևմտյան ափերով։ Ինպիսի Կամչատկա վերադարձի ճանապարհին արշավախումբը հայտնաբերում է Ալեուսյան կղզիները։ Արշավախմբի անդամները նկարագրել են Ալյասկան և նրա շուրջը եղած կղզիները և վերջապես վերադարձել Պետրոպոլիտովսկ։

Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևմտյան ափերի ուսումնասիրության մեջ հայտնի է ուես ծովազնաց Գ. Ս. Շելլիսովը, որին անվանում են «Ռուս Կոլումբ»։ Շելլիսովը 1783 թ. ուղևորվել է ղևախի «Մեծ Երկրի» ափերը։ Առաջին տարին նա ձմեռել է Բերինցի կղզու վրա։ 1784 թ. Շելլիսովը հասել է Կադյակ կղզուն։ Շարունակելով ճանապարհը նա հասել է Ալյասկա և այնտեղ կատարել բազմաթիվ ուսումնասիրություններ։

1812 թվին Սան-Ֆրանցիսկո խորշից ոչ հեռու հիմնադրվել է ուեսական գաղութ։ Այդ եղել է ուեսների Ամերիկայում ունեցած տիրապետության ամենահարապային սահմանը։ Ռուսները ոչ միայն նավարկել և ուսումնասիրել են հյուսիս-արևմտյան Ամերիկայի ափերը, այլ կատարել են նաև այդ ափերի հանութք։ Ռուսների հայտնագործումները և ուսումնասիրությունները Ամերիկայում և իրազարգացումը օվկիանոսում չափազանց շատ են։

Հյուսիսային Ամերիկայի արկտիկական սեկտորի, նրա կղզիների, գետերի, քաղաքների և լեռների մասին խոսելիս աշակերտները մեծ ուշադրությամբ կլսեն Չկալովի, Գրոմովի Մոսկվա—Հյուսիսային բևեռ Հյուսիսային Ամերիկա անդրբևեռային անօդային թռիչքի մասին։

6-րդ դասարանի դասադրքում Ավստրալիայի հետազոտության պատմության մեջ ուեսների մասին մի փոքր հիշատակություն կա, որը չի կարող բավարարել մեր աշակերտների հետաքրքրությունը։ Ավստրալիայի հետազոտման մեջ չափա-



դանց մեծ դործ է կատարել ուսու աշխարհապարտեալ եւ ճանապարհորդ Միկլուխո-Մակլայը: Այստրալիան անցնելիս պետք է աշակերտներին պատմել, որ Միկլուխո-Մակլայը ճանապարհորդել է Նոր-Գվինեայում, Այստրալիայում եւ Օվկիանիա կղզիներում, ապրել է պապուասների մեջ, ուսումնասիրել է նրանց կյանքն ու կենցաղը: Միկլուխո-Մակլայը զարգացրել է այն միտքը, որ մարդկային ցեղերի մեջ չկա տարբերութիւն: Մ. Մակլայը երկար ժամանակ ապրելով պապուասների մեջ, խորը հումանիստական վերաբերմունք է ցուցաբերել զեպի տեղական ժողովուրդը եւ այդ եղել է առաջին նախապայմանը, որ նրան հաջողվել է այդքան հարուստ նյութեր հավաքել եւ այդքան լավ ուսումնասիրել այդ կղզիները:

7-րդ դասարանի աշխարհագրութեան ծրագիրն ընդգրկում է ՍՍՌՄ ֆիզիկական աշխարհագրութեանը: Այս դասընթացի ամեն մի թեման անցնելիս աշակերտները դասադրքում կարգում են հարյուրավոր աշխարհագրական օբեկտների անուններ, որոնք կապված են այն հայանաբերողների եւ ուսումնասիրողների անվան եւ գործունեութեան հետ:

«ՍՍՌՄ-ի ծովերը» թեման ուսումնասիրելիս, բավական չէ որ ուսուցիչը թվարկի եւ քարտեզի վրա ցույց տա ծովերը: Նա պետք է ծովերի աշխարհագրութեանը կապի այն ուսումնասիրողներ՝ Կրասոսկինի, Սեդովի, Լիտկի, Պախտուսովի, Մալիզինի, Վիկիցիու, Չեյսեկինի, Լապտե եղբայրների եւ սերիշների գործունեութեան հետ:

«Հյուսիսային ծովային ուղի» թեմայի աշխարհագրական անունների ուսուցումն ինքնանույառակ կլինի, եթե աշակերտներն իրենց հիշողութեանը չհարստացնեն «Սիրիբյակով», «Չեյսեկին», «Լիտկե», «Մալիզին», «Սեդով» եւ այլ ստոյանատներ, ուսու աշխարհագրապետ-հետազոտողների գործունեութեան եւ նրանց կողմից արված նկարագրութեանների ուսումնասիրութեամբ: Աշխարհագրութեան դասատուն պետք է աշխարհագրական ամեն մի օբեկտի մասին աշակերտի հիշողութեան մեջ հետք թողնի:

«ՍՍՌՄ-ի ուղեքը» թեման անցնելիս ոչ միայն պետք է ցույց տալ Տյան-շանը, Խանթենդերին եւ այլ լեռներ, այլ նշել, որ այդ լեռները ուսումնասիրել են ուսու գիտնականներ Սեմյուսով-Տյան-Շանսկին, Պրոսկովսկին, Մուշկետովը եւ այլն:

Անհրաժեշտ է ընդդժել, որ նախատովետական շրջանում աշխարհի քարտեզի վրա նշված աշխարհազրական ճանապարհորդութունները՝ Մագելլանի, Կոլումբոսի, Վասկո-դե-Գամայի և մյուսների շարքում այժմ ավելացել են Ստալինյան առաջին և երկրորդ մարշրուտները՝ ղեկի չյուսիսային բևեռ—չյուսիսային Ամերիկա: Աշխարհի քարտեզի վրա այժմ զծված են կարմիր գծեր, որոնք պատկերում են սոյվետական հերոս օդաչուների, բևեռախուզիչների և գիտնականների սխրագործությունները:

Աշխարհագրության առպարեզը չափազանց լայն է, այդ քաղմարտնադակ գիտությունն ամբողջովին ընդգրկել զպրոցական աշխարհագրության ծրագրերում հնարավոր չէ: Այդ առարկայի այն բաժինը, որը վերաբերում է պատմական աշխարհագրությանը, ինչպես նաև ուսս խոշոր աշխարհագրագետ-ճանապարհորդների հայտնագործումներին և նկարագրություններին, դասագրքերում քիչ են լուսարանված: Այդ պակասը պետք է լրացնեն աշխարհագրության դասատուները՝ օժանդակ նյութերի և գրականություն միջոցով:


Ռուս խոշոր ճանապարհորդների կյանքի ու գործունեություն մասին զատի ընթացքում անցածից բացի, զպրոցում պետք է կազմակերպել աշխատանքի այլ ձևեր: Իրանք աշխարհագրական խմբակի և արտագասարանային այլ աշխատանքի ձևերն են: Ռուս խոշոր ճանապարհորդների կյանքի ու գործունեություն ուսումնասիրությունը, սոյվետական աշխարհագրական գիտություն նվաճումների ուսումնասիրությունը, պետք է զանա միջնակարգ զպրոցի աշխարհազրական խմբակների, արտագասարանային պարապմունքների ուսումնասիրություն նյութ: Աշխարհազրական խմբակների պարապմունքների հիմնական առարկան պետք է լինի առաջին հերթին հայրենի երկրի աշխարհագրություն ուսումնասիրությունը: Այդ տեսակետից էլ նպատակահարմար է կազմակերպել զեկուցումներ Միկլուխտ-Մակլայի, Գրեկովսկու, Դեժնևի, Բերինգի, Սեմյոնով-Տյան-Շանսկու, Կոլլովի, Աբսենսկի, Չելյուսկինցիներին, Պապանինականների և շատ ուրիշների աշխարհազրական ճանապարհորդությունների և հետազոտությունների մասին: Նման թեմաներով ցանկալի է, որ առաջին հերթին հանդես գան աշակերտները: Այդ հարցում աշխարհագրություն ուսուցչի կոնկրետ օգնու-



Թյունը՝ զեկեցոց աշակերտներին պետք է լինի շատ մեծ, նա պետք է նշի համապատասխան զբաղանություն, աշակերտի տիրիվ մասնակցութեամբ կազմի զեկեցման թեզիսները, ինչպէս նաև նշի համապատասխան զխօսակից նյութեր, որոնք լուսարանում են և հարստացնում զեկեցման թեման:

Այս հարցերի մասին ուսուցիչներին, թեկուզ փոքր չափով դործնական օգնութիւնն ցույց տալու նպատակով, սույն աշխատութեան մեջ նպատակահարմար ենք համարել համառոտակի նյութեր տալ մի քանի սուս նշանաւոր ճանապարհորդների և դործունեութեան մասին:

---





## ՊՅՈՏԻ ՊԵՏՐՈՎԻՉ ՍԵՄՅՈՆՈՎ-ՏՅՕՆ-ՇԱՆՍԿԻ

Էլինում եմ աշխարհագրագետների  
երեմ հիպոնաճառարուդ, երկրագիտ և  
կազմակերպիչ: Պյոտր Պետրովիչը եղել է  
և այս, և այն, և երբեք:

Լ. Ս. ԲԵՐԳ

Ռուս նշանավոր աշխարհագրագետ և ճանապարհորդ Պյոտր  
Պետրովիչ Սեմյոնովը ծնվել է 1827 թվին Ռյազանի նահանգի  
Ուրուսով գյուղում: Պատանի հասակում նա աչքի է ընկնում  
իր ընդունակութուններով և հենց այդ հասակից նրա մեջ  
ծնվում է սեր գեպի ընտրվումը. գյուրջական տարիներին



Պ. Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկի  
(1827—1914)

նա կատարում է մի շարք աշխարհա-  
գրական էքսկուրսիաներ իր ընակա-  
վայրի շրջանում: Գյուրջական գյուրջն  
ավարակուց հետո Պ. Պ. Սեմյոնովն  
ընդունվում է նախապատրաստական  
գյուրջը: Ավարակով գյուրջը, նա  
1845 թ. քննութուն է տալիս և ըն-  
դունվում Պետերբուրգի համալսարա-  
նի ընական դիսպոթյունների բաժինը:  
1848 թ. Պ. Պ. Սեմյոնովը հանձնում է  
թեկնածուական քննութունը և ավար-  
տում համալսարանը: 1849 թ. փետրե-  
վարին նա ընտրվում է Ռուսական  
Աշխարհագրական ընկերության իտիական անդամ: Ընկերության  
անդամ ընտրվելուց հետո սկսվում է նրա եռուս աշխատանք-  
ների շրջանը: 1848—1849 թ. թ. ընթացքում Պ. Պ. Սեմյոնովը  
վերստանիկական ուսումնասիրություններ է կատարում Ռու-  
սաստանի սևահողային տարածություններում և Դոնի ավազա-  
նում: Այդ նյութերի հիման վրա նա զբում է գլխերտացիա և

ատանում մագիստրոսի գիտական աստիճան: Համալսարանում սովորելու, ինչպես նաև հետագա աշխատանքի տարիներին Սեմյոնովը սերտ կապ է պահպանում ուղևոր խոշոր աշխարհագրագետ-ճանապարհորդների հետ, սխտեմատիկաբար բարձրացնում է իր գիտելիքները: Դսնի ավագանի ուսումնասիրություններն ավարտելուց հետո երկու տարի ճանապարհորդում է արտասահմանում, լինում է Հարց և Վոզեզ լեռների շրջանում, ճամփորդում է շվեյցարական Ալպերում և Իտալիայում, 17 անգամ բարձրանում է Վեզուվի վրա: Դեռ արտասահմանում ճանապարհորդելու տարիներին Պ. Պ. Սեմյոնովը սրտում է ճամփորդել Տյան-շանում, որն այն ժամանակ գեռևս ուսումնասիրված չէր:

Վերադառնալով Ռուսաստան Պ. Պ. Սեմյոնովը, լավ նախապատրաստվելուց հետո, 1856 թ. մայիսին ուղևորվում է դեպի Տյան-շան: 1856 թ. ընթացքում նա ուսումնասիրում է Իսիկ-Կուլ լիճը և Անգրիլիայն Ալատաուն: Բառնասույում ձմեռելուց հետո 1857 թ. վարնանը նա նորից ուղևորվում է դեպի Տյան-շան և այս անգամ նրան հաջողվում է թափանցել լեռների խորքը:

Սեմյոնով-Տյան-Շանսիին առաջինն է ոտք դրել Տյան-շանի վրա և 1<sup>1</sup>/<sub>2</sub> տարվա ընթացքում ուսումնասիրել է այն, Իսիկ-Կուլ լիճը, Թարիմ գետի վերին հոսանքը. նա առաջինն էր եվրոպական հետազոտողների մեջ, որ առաջին անգամ ոտք դրեց հսկա Խան-Թենգրիի լանջերին:

Տյան-շանում կատարած ուսումնասիրությունների և ճամփորդությունների ժամանակ Պյոտր Պետրովիչը հերքել է Ա. Հումբոլտի Տյան-շանի մասին ունեցած հրաբխային ծագման տեսությունը: Նա ապացուցել է, որ այնտեղ գործող հրաբուխներ չկան, որ Տյան-շանի վրա մշանջենական ձյան սահմանը գտնվում է շատ մեծ բարձրության վրա: Սեմյոնով-Տյան-Շանսիին աշխարհագրական գիտությանը սովել է չափազանց արժեքավոր տեսություն՝ այդ լեռների բուսական և կենդանական աշխարհի ուղղաձիգ զոնայականության մասին: Այդ ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերել է գիտությանը անհայտ տասնյակ բույսեր: Լինելով արտակարգ եռանդի ու ընդունակությունների տեր և բազմակողմանիորեն պատրաստված գիտնական, նա հիմք է դրել Տյան-շանի մասին երկած ժամանակակից տեսությանը, ստեղծել է նախադրյալներ



նրա հետագա ուսումնասիրութիւնները համար: Սեմյոնով-Տյան-Շանսկու աշխարհագրական հետազոտութիւնները և ճանապարհորդութիւնները շատ բարձր են գնահատել սուս գիտնականները Մուշկետովը, Կրասնովը և շատ ուրիշները: Պյոտր Պետրովիչ Տյան-Շանսկու գրչին են պատկանում տասնյակ գիտական աշխատութիւններ: Սկսելով նկարագրել մի սրէէ աշխարհագրական օրեկա կամ քնդարձակ աշխարհագրական մարզ, Տյան-Շանսկին նախ տալիս է սեղանքի զեղարվեստական նկարագրութիւնը և այդպիսով ավելի հետաքրքիր է դարձնում բնութիւնն ուսումնասիրութիւնը: Այդպիսի զեղեցիկ նկարագրութիւնների մէջ կարող ենք հանդիպել նրա „Путешествие в Тянь-шань“ գրքում և այլ աշխատութիւններում ու հոգւածներում: Այդ գրքից առանձին հատվածներ կան սպագրված „География в школе“ ամսագրի 1947 թ. № 3-ում:

Տյան-Շանսկու հետագա ամբողջ գործունեութիւնը անբաժանելիորեն կապված է Ռուսական Աշխարհագրական բնկերութիւնն պատմութիւնն հետ:

Վերագտնալով Տյան-շանի էքսպեդիցիայից, նա սկզբում աշխատել է սրպես Աշխարհագրական բնկերութիւնն Ֆիզիկական աշխարհագրութիւնն բաժնի վարիչ: 1873 թ. Տյան-Շանսկին ընտրվում է Ռուսական Աշխարհագրական բնկերութիւնն վիցե-պրեզիդենտ և փաստորեն անցնում է բնկերութիւնն զեղարվեստական գլուխը: Այդ ժամանակամիջոցում Պրժեվալսկին, Ռոբորովսկին Կոզլովը, Մուշկետովը, Օբրուչևը և շատ ուրիշներ կազմակերպում էին էքսպեդիցիա զեղի Կենտրոնական Ասիա: Սեմյոնով-Տյան-Շանսկին մշակում է այդ էքսպեդիցիաների գիտական գործունեութիւնն ծրագիրը, անձամբ մասնակցում է էքսպեդիցիաների հանդերձավորմանը:

Տյան-շանի էքսպեդիցիայից հետո՝ 1858—1861 թ. թ. իր ամբողջ հռանդով Պյոտր Պետրովիչը ակալով մասնակցութիւնն է ունենում գյուղացիներին ճորտական կախումից ազատելու կոմիտիայի աշխատանքներին, որի մասին նա երազում էր զեռես պատանի հասակից:

60-ական թվականների ռեֆորմները կտրուկ պահանջ էին առաջադրում վերափոխելու վիճակագրական գործը Ռուսաստանում: 1863 թ. Տյան-Շանսկին կանգնում է ուսական վիճա-

կազմութեան գլուխը: Նրա 33-ամյա գործունեութեանն այդ բնագավառում ուսական վիճակազրութեանը բարձրացնում է բարձր աստիճանի:

Նրա անմիջական նախաձեռնութեամբ ու սահանջով է կատարվում առաջին համառուսական մարզահամարը 1897 թ.:

Սեմյոնով-Տյան-Շանսկին ոչ միայն ճանապարհորդել, հետազոտել և գրել է, այլև պայքար է մղել աշխարհագրական գիտութեան թերագնահատման ամեն տեսակի փորձերի դեմ: Նա առաջավոր աշխարհագրական գիտութեան զարգացման գործում անգնահատելի ավանդ է մուծել:

Պ. Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկու ծառայութեանը գիտութեան նկատմամբ հավերժացվել է նրանով, որ նրա պատվին են կոչվել 11 աշխարհագրական վայրեր Ասիայում, Հյուս. Ամերիկայում և Շպիցբերգենի վրա, բուչյերի 27 տեսակներ և կենդանիների մոտ 70 տեսակներ: Իր կյանքի վերջում նրա անունը մոպված էր 66 գիտական հիմնարկների պատվավոր ցուցակներում:

Պ. Պ. Սեմյոնով-Տյան-Շանսկին մահացել է 1914 թվին, 87 տարեկան հասակում: Յու. Մ. Շոխարսկին ընդունելով ուսական Աշխարհագրական ընկերութեան նախագահի պաշտոնը Սեմյոնով-Տյան-Շանսկու մասին ասել է.

«Մեզ համար, ընկերութեան հին անդամներիս համար, «Պյոտր Պետրովիչը» և «Աշխարհագրական ընկերութեանը» անբաժանելի են»:

## Ն. Մ. ՊԵՏԵՎՍԻՍԿԻ

Պրժևալսկին ծնվել է Սմոլենսկի նահանգի Կիմրորովո գյուղում, 1839 թ. ապրիլի 12-ին: Պատանի հասակից զրկվել է հորից: Պրժևալսկու գաստարակութեան հարցով զբաղվել է մայրը, որը խելոք և խստապահանջ կին էր: Մայրը Պրժևալսկուին միշտ հնարավորութեան է տալիս գնալ գրտաանքի, ճանապարհորդել անտառում, գիտել շրջապատի բնութեանը և սիրել այն: Այդ տարիներին Պրժևալսկու մոտ ծնվում է որսորդութեամբ զբաղվելու սերը, որը հետագայում գաւնում է նրա սիրած զբաղմունքներից մեկը իր կյանքի ամբողջ ժամանակա-



միջոցում: Որսորդությունը իրստ կազգուրում է, առանց այն էլ նրա առողջ օրդանիզմը: Նա սիրում էր ճանապարհորդել բնության ծոցում, հավաքել բույսերի տեսակներ, զիակը անասուի կենդանիներին և թռչուններին: Դեռ պատանի հասակից նա սիրում էր կարգալ զբքեր թռչունների և կենդանիների մասին: Արտակարգ հիշողություն ունենալը նրան հնարավորություն էր աալիս կարգացած աշխարհագրական ճամփորդական նկարագրություններն անդիր հիշել: Երբ ընկերները հիշեցնում էին նրան ծանոթ մի գրքի մասին և կարգում նրա մի քանի սոգերը, մնացածը Պրժեվալսկին ասում էր անդիր:

Սմոլենսկի գիմնազիան ավարտելուց հետո, 16 տարեկան հասակում, Պրժեվալսկին մասնակցում է Ղրիմի պատերազմին որպես շարքային զինվոր: 1861 թ. նա ընդունվում է սազմա-

կան աղագեմիան և այն ավարտելուց հետո գործուղվում Պոլոցկի գունդը, որտեղ նա առաջ ծառայել էր: Աղագեմիայում սովորելու տարիներին Պրժեվալսկին կազմել է «Военно-статистическое обозрение Приамурского края» աշխատությունը: Այդ աշխատությունը գեռ այն ժամանակ շատ բարձր գնահատականի է արժանացել Ռուսական Աշխարհագրական ընկերության կողմից, որն առիթ ծառայեց Պրժեվալսկուն 1864 թ. ընտրելու ընկերության անդամ: Այդ ըն-



Ն. Մ. Պրժեվալսկի  
(1839—1888)

կերության հետ է կապվում նրա հետագա ամբողջ կյանքը: Զինվորական ծառայության մեջ եղած ժամանակ Պրժեվալսկին գասավանդում էր սազմական ուսումնաարանում և միշտ երազում ու նախապատրաստվում էր սպաղա ճանապարհորդության: Պրժեվալսկին զբել է ընդհանուր աշխարհագրության գասագիրք, որն իր գիտականությամբ և կենդանի նկարագրություններով մեծ գնահատականի է արժանացել քաղաքացիական և սազմական ուսումնական հաստատությունների կողմից:

1867 թ. սկզբներին Պրժեվալսկին Վարշավայից փոխադրվում է Պետերբուրգ և Ռուսական Աշխարհագրական ընկերու-

Թյանը ներկայացնում զեպի Կենտրոնական Ասիա իր կատարելիք ճանապարհորդության պլանը: Ռուսական Աշխարհագրական ընկերության վիցե-պրեզիդենտ Սեմյոնով-Տյան-Շանսկու աջակցությամբ Պրժեվալսկին 1867 թ. էքսպեդիցիա է կազմակերպում զեպի Ուսուրիի երկրամասը: Ճանապարհվելուց առաջ նա գրել է. «Ես գնում եմ զեպի Ամուր, որտեղից զեպի Ուսուրի գետը և այնուհետև զեպի Մեծ օվկիանոսի ամբը, Կորեայի սահմանին մոտիկ: Այո, ինձ վրա դժվար աշխատանք է ընկել, ուսումնասիրել այնպիսի տեղանք, որի մեծ մասը զեռ չի ուսումնասիրված մարզկանց կողմից...»: Իր ճանապարհորդության ընթացքում Պրժեվալսկին տվել է Ուսուրական երկրամասի հիանալի նկարագրությունը: Ամուրի երկրամասի տնտեսության զարգացման համար, նշել է Պրժեվալսկին, նրա հողերը, բնության ընդերքում թաքնված հարստությունները, ստեղծում են նպաստավոր պայմաններ: Ամուրի երկրամասի բնությունը շատ հարուստ է կենդանական և բուսական աշխարհով, անսպառ են նրա ձկան և թռչունների հարստությունները: Պրժեվալսկին գեղեցիկ է նկարագրել Ուսուրական երկրամասի աշխարհագրական առանձնահատկությունները, ինչպես նաև Հեռավոր Արևելքի բնության տարրերիչ գծերը:

Ուսուրական երկրամասում կատարած իր ճանապարհորդությունը Պրժեվալսկին գիտում էր որպես հետագա աշխատանքների նախադրյալներ: Այդ ճանապարհորդության ընթացքում նա փորձեց իր ուժերը և իրավունք ստացավ ճանապարհորդել Արևելյան Չինաստան ու Հարավային Մոնղոլիա: Չինաստանում և Մոնղոլիայում ճանապարհորդելու ընթացքում նպատակ էր գրել կատարել լրիվ ֆիզիկո-աշխարհագրական, կենդանաբանական ուսումնասիրություններ, իսկ էստոգրաֆիկ ուսումնասիրությունները կատարել է հնարավորության սահմաններում:

1870—1873 թ. թ. Պրժեվալսկու՝ զեպի Կենտրոնական Ասիա առաջին արշավախումբը անցել է 11.800 կլմ ճանապարհ: Պրժեվալսկին կատարել է անցած ճանապարհի հանուժը: Ամեն օր կատարել է օդերևութաբանական, մագնիսային գիտություններ, հավաքել է բուսաբանական և կենդանաբանական կուլեկցիաներ: Իր օրագրում գրանցել է աշխարհագրական և կենդա-



նաբանական արժեքավոր տեղեկություններ: Պրժեվալսկու ուսումնասիրությունները Ասիայի քարտեզի վրայից վերացրին Հիմալայան լեռների և Տյան-շանի, Ալթայի ու Սայանյան լեռների միջև ընկած սպիտակ տարածությունները: Կենտրոնական Ասիայի վայրի բնության մեջ երկարատև և համառ ճանապարհորդություն կատարելու ընթացքում՝ աշխարհագրական գիտությունը հարստացնելու իր ծառայության համար Պրժեվալսկին համաշխարհային անուն ձևեց բերեց:

Նրա ճանապարհորդության նկարագրությունը գեպի Կենտրոնական Ասիա, լույս է տեսել նաև անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով: „Монголия и страна тангутов“ աշխատությունը Կենտրոնական Ասիայում կատարած ճանապարհորդության արգելունքն է, որը գիտական աշխարհի կողմից բարձր գնահատականի է արժանացել: Առաջին և երկրորդ ճանապարհորդությունների նյութերը մշակելու ընթացքում Պրժեվալսկին նախապատրաստվում է հետագա նոր ճանապարհորդության:

1876—77 թ. թ. կազմակերպվում է Պրժեվալսկու երկրորդ էքսպեդիցիան: Արշավախումբն ուսումնասիրում է Լոր-Նորի ավազանը և Զունդարիան: Հասնելով Թարխո գետին, արշավախումբի 9 անդամներին Պրժեվալսկին գետի հոսանքով ուղարկում է գեպի հարավ: Այդ ճանապարհորդության ընթացքում Պրժեվալսկին հայտնաբերել է բազմաթիվ լեռներ և լեռնազաղախներ, որոնք գիտության կողմից ճանաչվել են որպես հայտնագործություններ:

Կենտրոնական Ասիայում ճանապարհորդելիս Պրժեվալսկին որոշել է Տիրեթի սարահարթի հարավային սահմանը: Նա ապացուցել է, որ նրա հարավային սահմանը 300 կմ գեպի հյուսիս է, քան այն առաջ պատկերացվել է: Պրժեվալսկուն չի հաջողվել հասնել Տիրեթ, այդ դործին խոչընդոտ են հանդիսացել երկու հանդամանք, նախ արշավախումբի անդամների և ղեկավարի հիվանդանալը և, երկրորդ՝ սուս-չինական հարբերությունների սուր բնույթը: Դեպի Կենտրոնական Ասիա կատարած ճանապարհորդության նյութերի մեծ մասը հրատարակվել է նրա չորրորդ ճանապարհորդության հետ միասին:

1879 թվականի սկզբներին Պրժեվալսկին զուրս եկավ երրորդ

ճանապարհորդութեան՝ ղեպի Կենտրոնական Ասիա: Արշավա-  
խումբը բարձրանում է Տիրեթի բարձրավանդակը, որտեղ նրանք  
տեսնում են նոր աշխարհ: Երբորդ ճանապարհորդութեան ըն-  
թացքում արշավախումբը Պրժեվալսկու ղեկավարութեամբ ու-  
սուսնասիրել է Խուան-Խե գետի վերին հոսանքները, Տիրեթը և  
Արևելյան Նան-շան լեռները, ինչպես և Յան-Յզի գետի աղունք-  
ները: Այդ ճանապարհորդութեան ընթացքում Պրժեվալսկին  
հայտնաբերել է մի շարք լեռներ. Պրժեվալսկին գրանց անվա-  
նել է «Մոսկվա», «Ռուսաստան»: Մոսկովյան լեռնաշղթայի ամե-  
նաբարձր գագաթը անվանել է «Կրեմլ»:

1884—1885 թ. թ. Պրժեվալսկին կազմակերպում է չորրորդ  
ճանապարհորդութեանը ղեպի Կենտրոնական Ասիա: Այս ան-  
գամ նա ուսուսնասիրում է զարձյալ Տիրեթը, Խուանխեի  
աղունքները, Թարիմ գետի և Լոր-Նոր լճի ավազանները:

Իր ճանապարհորդութեանների ընթացքում Պրժեվալսկին  
ավել է Կենտրոնական Ասիայի Ֆիզիկո-աշխարհագրական  
նկարագրութեանը: Մինչև Պրժեվալսկու կատարած ուսուսնա-  
սիրութեանները, Կենտրոնական Ասիայի կլիմայի մասին գի-  
տութեանը ոչինչ հայտնի չէր: Նրա ծառայութեանը մեծ է ոչ  
միայն Կենտրոնական Ասիայի ֆիզիկական աշխարհագրութեան  
ուսուսնասիրութեան գործում, այլև բնագիտութեան և բուստա-  
բույսերի ընդհանուր ուսուսնասիրութեանների ժամա-  
նակ նա եղել է վերին աստիճանի օբեկտիվ և բարեխիղճ, զրել  
է այն մասին, ինչը աչքով տեսել է: Դեպի Կենտրոնական Ասիա  
կատարած ճանապարհորդութեանները և ուսուսնասիրու-  
թեանները շատ բարձր գնահատականի են արժանացել նրա կեն-  
դանութեան ժամանակ: Ռուսաստանի 24 գիտահետազոտական  
հիմնարկներ Պրժեվալսկուն ընտրել են իրենց պատվավոր ան-  
դամը: Պրժեվալսկու ուսուսնասիրութեանները հայտնի են ամ-  
բողջ աշխարհին: Իր անձնական օրինակով Պրժեվալսկին ապա-  
հովել է արշավախմբի առաջ կանգնած խնդիրների իրագոր-  
ծումը: Արշավախմբի մեջ ընդգրկված մարդկանց նա շատ  
բարձր էր գնահատում և մեծ վստահութեան ցուցաբերում ղե-  
պի իր ընկերները:

Պրժեվալսկու ճանապարհորդութեանների և ուսուսնասի-  
րութեանների զիտական արժեքը շատ մեծ է և բազմակողմա-



նի: Նա իր ուսումնասիրությունները կատարել է ընդարձակ  
Կենտրոնական Ասիայում, հայտնաբերելով նոր բույսեր, կենդա-  
նիւններ: Նրա հայտնաբերած վայրի ձին կոչվել է «Պրժեվալսկու  
ձի»: Նա գրել է իր ուսումնասիրած վայրերի ֆիզիկական  
աշխարհագրությունը, որը մինչև օրս էլ պահպանում է  
իր դիտական բարձր արժեքը: Պրժեվալսկու գրած գըր-  
քերը աշխարհագրական-գեղարվեստական հիմնային ժողովա-  
ծուներ են, որտեղ ընթերցողը տեսնում է Կենտրոնական  
Ասիայի բնությունը և անվանի աշխարհագրագետի կյանքի ան-  
ցած ուղին: Գեղարվեստական են նրա ոչ միայն ֆիզիկո-աշ-  
խարհագրական օրեկանների, այլև բուսական և կենդանական  
աշխարհի նկարագրությունները: Պրժեվալսկին իր կատարած  
ուսումնասիրությունների և ճանապարհորդության մասին գրել  
է շատ գրքեր, որոնք հրատարակվել են սուսերեն և օտար լեզու-  
ներով:

Պրժեվալսկին 1888 թ. ձեռնարկում է հինգերորդ էքսպե-  
դիցիան գեպի Կենտրոնական Ասիա, սակայն շատ շուտ հիվան-  
դանում և մահանում է Կարակոլում (Կիրգիզական ՍՍՌ):

Պրժեվալսկու կյանքի ուղին պայծառ լույս է պցում ուս-  
ական աշխարհագրական գիտության զարգացման ճանապարհի  
վրա: Սովետական երիտասարդությունը, մեր պատանի հայրե-  
նասերները, պետք է ուստական առաջավոր աշխարհագրական  
գիտության և նրա գիտնականների ու ճանապարհորդների օրի-  
նակով ուսումնասիրեն հայրենի երկիրը՝ և նրա ընդերքի անսպառ  
հարստություններն ի սպաս զնեն մեր Հայրենիքի բարգավաճող  
ժողովրդական տնտեսությանը:

### ՄԻԿԼՈՒԵՆՈՎՍԿԻՍ

Նիկոլայ Նիկոլաևիչ Միկուլսո-Մակլայը ծնվել է Նովոռո-  
բոյի նահանգի Բորովիչի քաղաքից ոչ հեռու Ռոժդեստովենսկի  
գյուղում 1846 թ.: Միկուլսո-Մակլայի հայրը՝ Նիկոլայ Իլյիչ  
Միկուլսոն, մասնագիտությամբ ինժեներ էր:

Պատանի Միկուլսո-Մակլայը 11 տարեկան հասակում զբըր-  
վում է հորից: Հոր մահը նյութական ծանր պայմանների առաջ  
է կանգնեցնում նրանց ընտանիքին: Միկուլսո-Մակլայի մայրը՝

Յկատերինա Սեմյոնովնան, իր ավագ որդուն՝ Մակլային, ուղարկում է Պետերբուրգ սովորելու։ Մեկ տարուց հետո մոր ցանկութեամբ նրան փոխադրում են երկրորդ պետական գիմնազիան։ Այն ժամանակ գիմնազիայի ձևական կարգապահությունը ուսուցման սխալաստիկ մեթոդը, ինչպես նաև դասավանդվող առարկաները Միկլուխո-Մակլային չէին հետաքրքրում։ Գիմնազիայի ղեկավարները, ինչպես նաև գասատուները, զժողով էին Միկլուխոյից և այդ պատճառով էլ նրան չվիճակվեց ավարտել գիմնազիան։ Գիրեկցիան Միկլուխո-Մակլային որոշ առարկաներից ետ մնալու անվան տակ հեռացնում է գիմնազիայից։ 17 տարեկան հասակում Միկլուխո-Մակլայն ընդունվում է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը, որպես ազատ ունկնդիր։ Միկլուխո-Մակլային հեռացնում են նաև Պետերբուրգի համալսարանից՝ նրա նկատմամբ եղած «անվստահության» և ազատ լսողի կանոնները խախտելու պատերվակով։

